Որհնյալ ե աստված, հորովել:

Քաշի, յեզը, ուսիդ մատաղ,
Քաշի, քաշենք, վար անենք.
Ճիպտին արա, քըշի, հոտաղ,
Մեր սև որին ճար անենք:

Պարտքատերը գանգատ զընաց,
Քյոխեն կը գա, կը ծեծի,
Տերտերն որհնեց, անվարձ մընաց,
Կը բարկանա, կանիծի:

Են որն եկան թովջի արին,
Հարկ են ուզում տերության.
Ի՞նչ տամ կուին ու բեզյարին...
Վարի, վարի, իմ գութան:

Չեռս պակաս, ուժը հատած,
Հազար ու մի ցավի տեր,
Իսձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Արի, գութան, վարի, գութան,
Որն եկել ե, ճաշ դառեր,
Աոը շուռ տուր, խոփիդ դուրբան,
Որհնյալ ե աստված, հորովել:

ՅԵՐԿՈՒ ԽՈՓ

Միւնույն յերկաթի կտորից դարբնոցում շինված եյն
յերկու խոփի:

Նրանցից մեկն իսկույն գնաց աշխատանքի, իսկ մյուսը
յերկար ժամանակ ընկած եր դարբնոցում:

Մի ժամանակ այդ յերկու խոփերը կրկին պատահեցին
իրար:

Աշխատող խոփին արծաթի պես փայլում եր, իսկ պարապ
մնացածը՝ սևացել եր ու ժանգով պատել:

— Ասա, խնդրեմ, ինչիցն ե, վոր դու այդպես փայլում
ես,— հարցընց ժանգոտած խոփին իր ընկերոջը:

— Աշխատելուցն ե, սիրելի ընկեր,— պատասխանեց փայ-
լուն խոփը:— Իսկ յեթե դու ժանգոտել ես և առաջվանից ավելի
յես վատացել, այդ նրանից ե, վոր յերկար ժամանակ անգործ
ես յեղել:

ԴԺՎԱՐ ՀԱՆԵԼՈՒԿ

Պուղին թաշկինակով տասը ձու յեր տանում տուն:
Ճամփին պատահեց իր ծանոթին և ասաց.

— Թե իմանաս թաշկինակումն ինչ կա, սրա ձվածեղից
քեզ ել կուտացնեմ:

— Զու, — պատասխանեց ծանոթը:

— Վահ, եղ վոնց իմացար, — զարմացավ խելոքը:—

Դե են ել ասա՝ քանի հաս ե, բոլոր տասն ել քեզ կտամ:

— Տասը, — պատասխանեց ծանոթը:

— Առ, ախպեր, եղ ել իմացար, — ասաց Պուղին ու թաշ-
կինակով ձուն տվեց ծանոթին:

ՃԱԽԱՐԱԿ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սպիտակ մալանչներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Վոր յես հոգամ իմ ցավեր:

Տիգրանիկս գուլպա չունի,
Հանդ ե գնում վոտարաց,
Գաբրիելս չուփա չունի,
Միշտ անում ե սուգ ու լաց:

Զվալ չունենք, չաթու չունենք,
Վհչ սամոտեն, վհչ պարան,
Այսպես աղբատ դեռ յեղած չենք,
Կտրվել ե ամեն ըան:

Դեռ հարս եյի, վոր գործեցի
Քանի կապերտ, խալիչա,
Բայց դրամնցից շուտ զրկվեցի,
Հիմա չունեմ մի քեշա:

Կարմիր որս, յերբ սեացավ,
Պարտը մնաց թեև քիչ,
Պարտատիրոջ սիրոն ել սեցավ,
Յեկավ տարավ ամեն ինչ:

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սպիտակ քուլաներ,
Մանիր թելեր հաստ ու բարակ,
Վոր լես հոգած իմ ցավեր:

ՓԱԽՈՒՍ

1936 թ. դեկտեմբերի 15-ին ժամը 13-ին իսպանական խոսվարաների № 1 հիդրոինքնաթիւն ող բարձրացավ: Նրան հանձնարարված եր ուղեկցել խոսվարաբների նավերին: Ինքնաթիւի վրա ելին կրտսեր ողաչու Անտոնինոն, բորտմեխանիկ Եվարիստոն և ավագ ողաչու՝ Փաշիստական զորամասերի լեռնանտ Մորենոն:

Անտոնինոն և Եվարիստոն վաղուց ելին սպասում այդ որվան, կինելով բոնի կերպով մորիլիզացիայի յենթարկվածներ՝ նրանք ծրագրել ելին հանրապետականների մոտ փախչելու պլանը: Յեվ ահա մոտեցել եր հարմար բոպեն:

Անտոնինոն ինքնաթիւոր աննկատելի կերպով ուղղեց դեպի հյուսիս:

Լեյտենանտ Մորենոն զգալով ինչ-վոր վատ բան՝ հրամայեց ինքնաթիւն ուղղել ծրագրած ճանապարհով: Անտոնինոն չիպատակվեց:

— Պետք ե հանձնվել հանրապետականներին, — ասաց նա: Դրան վորպես պատասխան, Մորենոն դեկն ուժեղ կերպով ուղղեց դեպի խոսվարաբների նավահանգիստը: Այդ ժամանակ Անտոնինոն պահեստի դեկն ավելի ուժգնությամբ թեքեց դեպի հյուսիս: Նրանց մեջ կռիվ սկսվեց: Բորտմեխանիկ Եվարիստոն կրակեց Մորենոյի վրա, բայց վրիպեց: Եվարիստոն կրակեց յերկրորդ անգամ և վիրավորեց նրան մեջքից: Մորենոն ամբողջ թափով ընկավ դեկի վրա և աշխատում եր կանգնեցնել մեքենաները՝ ինքնաթիւոր խորտակելու նպատակով: Եվարիստոն կրակեց յերրորդ անգամ: Մորենոն ստացավ մահացու հարված և լոեց:

Մեկ և կես ժամից հետո Անտոնինոն հիդրոինքնաթիւոր հաջող կերպով իջեցրեց հանրապետականների աերոդրոմում:

Հանրապետականները մեծ ցնծությամբ դիմավորեցին հերոսու փախստականներին:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Հիդրոինքնաթիւոր ողանավ, վորը կարող ե և ջրի վրայով գնալ: Վրիպել—չկպչել:

Աերոդրոմի ինքնաթիւոնների իջնելու հրատարակ:

ՃԱՆՃԸ (ԱՌԱԿ)

Խոնարհ ու հեղ

Մի հոգնած յեղ,

Արորն ուսին,

Ճանճը պողին

Մի իրիկուն

Գալիս եր տուն:

Մին ել ճամբին

Են նստածին

Մի ուշեց ճանճ

Այսպես ասաց.

— Այդ յեզան հետ
վաղաղեղից եղ:
Քիթը տնկած
ձանձն ասաց.

— Մենք գորտեղից.
Վարում եյխնք,
Վարատեղից:

ԲԱՌԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Հեզ—խոնարհ, սուս ու փուս:

ԼԻՆԱ ՈԴԵՆԱ

1

Լինա Ողենան իսպանական հերոս ժողովրդի հարազատ աղջկներից մեկն եր: 1936 թվի սեպտեմբերի 20-ին Լինա Ողենան մեռավ հերոսի մահով: Գրենադա քաղաքի մոտ տեղի ունեցած կորիֆերի ժամամանակ կոմյերիտուհի հրամանատար Լինա Ողենան առաջնորդում եր իր զորամասը: Նա անվախ եր ու խիզախ—քաջի նման կովելով առաջ գնաց, իսկ նրա զորամասը յետ մնաց: Մեկ ել հանկարծ Լինան նկատեց, վոր ինքը արջապատված է թշնամիներով: Հասկացավ իր դրությունը, չըփախեցավ, չտատանվեց, բայց վճռեց թանկ ծախել իր կյանքը: Նա գիտեր, վոր թշնամիների ձեռքը պետք է ընկնի—բայց կանգ առավ, չոգեց, իր ունեցած բոլոր գնդակներից մեկը պահեց ծնկի տակը և մլուս բոլոր գնդակներից ամեն մեկով մի ֆաշիստ սպանեց: Վերջին, պահած գնդակով վերջ տվեց իր յերիտասարդ ու վառվուն կյանքին: Թշնամու ձեռքն ընկավ նրա անշունչ մարմինը միայն:

Կես ժամ հետո նրա ջոկատը վրա հասավ: Իր սիրելի հըրամանատարի դիակը տեմնելով, ջոկատը կատաղի հարձակվեց թշնամու զորամասի վրա և վոչ մեկին կենդանի չթողեց: Ապա վերցրին հերոս աղջկա դիակը և տարան:

2

Լինա Ողենայի մահը մեծ ցավ պատճառեց վոչ միայն իսպանիայի, այլ և ամբողջ աշխարհի բանվորներին ու նրանց զավակներին:

Մեր՝ Խորհրդային յերկրի բոլոր յերեխաները կարդացին, խմացան Լինա Ողենայի կյանքի և հերոսական մահվան մասին: Բոլորը սիրում ու հարգում են նրա ամման հիշատակը:

Այդ սիրո ապացույց և Լինա Ողենայի մորը գրված՝ 9 տարեկան Ասումա Մառերի նամակը, Սիմֆերոպոլ քաղաքից:

Սիմֆերոպոլի 10-րդ դպրոցի աշակերտուհի, 9 տարեկան Ասումա Մառերը մարտի 16-ին նամակ է ուղարկել Բարսելոնա, Փաշիստ խոռվարաների դեմ ունեցած կովկներում հերոսաբար ընկած կոմյերիտուհի Լինա Ողենայի մորը:

Նա գրել է.

«Սիրելի մորաքույր Ողենա.

Մեծ դժբախտություն է պատահել մեզ: Բայց դու մի լար: Հանրապետական իսպանիայում նույնպիսի ուրախ կյանք կլինի, ինչպես մեզ մոտ: Ելի մի լար նրա համար, վոր դու, քո սեաչյա Լինայի փոխարեն, ունես կապուտաչյա Լինա: Դա իմ քույրն է—Լինա Մառերը: Նա ծնվել է անցյալ տարվա ոգուտոսին, յերբ քո Լինան հերոսաբար ընկավ Փաշիստների դեմ կովկելիս: Յեվ ահա այն ժամանակ յես ու մայրիկս վորոշեցինք մեր փոքրիկին Լինա անունը տալ, վոր պահպանենք քո հերոսուհի Լինայի հիշատակը և կարեկցենք ձեր վշտին:

Վողջ յեղիր, թանկագին մորաքույր Ողենա: Մի մոռացիր, վոր դու մի Լինա ել ունես:

ԱՍՈՒՄԱ ՄԱՐԻԵՐ

ԲԱՌԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Տառանվել—կառկածել, յերկմտել (շարժվել):

Ապացույց—մի գեղք հաստատող փաստ, նշան:

Կարեկցել—ցավել, ափոսալ, վշտակեց լինել:

ՃԱՌՈՒՌՆ ՈՒ ՄՐԶՅՈՒՆԵ

Թուի-վոի մի ճպուռ
Վողջ ամառը շուռ ու մօւռ,
Յերգեց, ճռաց,
Ճռճռաց:
Մին ել ըհը, ձմեռը
Փոեց իրա թերք,
Բացեց գորդն սպիտակ,
Դաշտերն առավ ձյունի տակ:

Անցան պայծառ որերը...
Յեկան որեր ցրտաշունչ,
Ճպուռն ընկավ լուռ ու մունջ,
Քաղցած փորին ել ի՞նչ յերգ,
Յուրաք տարավ վոտ ու ձեռք:

Զընդ-զընդը գողալով,
Ծանր-ծանր սողալով,
Նա մրջյունին ասում եր.
— Գլխիդ մատաղ, սանամեր,
Մի ճար արա շունչ առնեմ,
Յըտից, սովից չմեռնեմ:
Կերակրի, տաքացրու,
Մինչև գարուն ապրեցրու:
— Ի՞նչ պատահեց, սանիկս,
Զարմանում եմ, ջանիկս,
Չաշխատեցիր ամառը,
Ասա, ի՞նչ եր պատճառը:
— Եղանի, սանամեր,
Ել ժամանակ ով ուներ,
Են խոտերում բուրավետ
Յերգում եյի մերոնց հետ:
— Ուրեմն դու...—այս, յես,
Վողջ ամառը դես ու դեն

Յերգ յերգեցի մշտապես:
— Յերգեցիր, հա, շատ բարի,
Այժմ ել բոնի վերվերի,
Քամին ծափ տա, դու՝ պարի:

ՅԵԹԵ ՇԱՏ ՍՈՎՈՐԵՄ, ԱՎԵԼԻ ԼԱՎ ԿԱՇԽԱՏԵՄ
(Բուսիզինի նառից)

Յես դեռ կիսագրագետ եմ: Վոչնչի մասին այնքան շատ
չեմ մտածում, վորքան սովորելու: Շատ եմ ցանկանում ավելի
առաջ գնալ: Յանկանուս եմ վոչ միայն դարբին լինել այլև
իմանալ, թե ինչպես ե մուրճը կառուցված, ինքո ել սովորեմ
մուրճեր պատրաստեր:

Գրքեր յերբեք չեմ կարգացել և միայն վերջերս, Զ ամիս
առաջ, կարդացի առաջին գիրքը—Պուշկինի հեքիաթները: Իսձ
շատ դուր յեկան:

Միայն, ճիշտն ասած, դժվարությամբ եյի հասկանում:
Յեվ գիտեմ յես. յեթե սովորեմ, ավելի լավ կաշխատեմ:
Շատ բաներ կան այժմ, վորոնց ինելքս չի համում: Շնորհա-
կալ եմ մեր կառավարությունից և կուսակցությունից. նրանք
ոգնեցին ինձ այս դործում, ուսուցիչներ նշանակեցին և յես
կսովորեմ:

Ահա կվերադառնամ և ամրող ուժով կլծեմ արտադրու-
թյան և ուսման աշխատանքներին:

ՃՆՃՂՈՒԿ

Վորսից վերադառնալիս՝ անց եյի կենում մի պարտեզի
միջով: Շունս վազում եր իմ առջնից:

Նա համկարծ իր քաղերը փոքրացրեց և սկսեց կամաց ու
զգույշ առաջ գնալ. կարծես վորսի հոտ եր առել:

Յես նայեցի ու փոքր ինչ հեռու, ճամբի վրա տեսա մի փոք-
րիկ ճնճղուկ, վորսի կտուցի շուրջը գեղին եր, իսկ դլուխն աղ-

վամազով ծածկված: Նա ընկել եր բնից ու անշարժ պառկել եր, միայնակ ու անողնական, հազիվ դուրս յեկած փոքրիկ թևերը փռած:

Յերբ շունչ ծանրաքայլ մոտենում եր նրան, հանկարծ մոտակա ծառի վրալից մի մեծ, սև կրծքով ճնճղուկ, քարի պես ցած նետվեց, ընկավ ուղղակի շան առաջը և հուսահատ ու ծղբտոցով մի յերկու անգամ թռավ դեպի շան դունչը:

Նա հարձակվում եր, վոր փրկի, պահպանի ձագին... Բայց նրա փոքրիկ մարմինը դողում եր սարսափից: Նրա ծղբտոցը կատաղի յեր: Նա ուժից ընկնում եր. նա իրեն դոհում եր:

Ի՞նչ ահագին հրեշ պիտի յերեար նրա աչքին շունը... Բայց և այսպես նա նստած մնալ չկարողացավ բարձր ու անվտանգ ձյուղին...

Շունս կանգ առավ. յետ քաշվեց...

Յես շտապեցի շվարած շանս յետ կանչել և հեռացա՛ զգալով մեջս մի պատկառանք դեպի այդ փոքրիկ թռչունը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

- Աղվամազ—փոքրիկ, նոր, առաջին անգամ բուռած մազ, քնքույշ փետուրներ:
- Նեսվել—ուժով բնինել:
- Հրեշ—անձունի, այլանդակ, սարսափելի մի բան:
- Պատկառանք—հարգանք:

ՅԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

Յերկու ընկերներ իրիկնապահին
Հրացան առած՝ անտառ զնացին,
Վոր մեկ բան վորսան
Շուտով յետ դառնան:

Հանկարծ անտառից մի արջ դուրս պրծավ
Ու կատաղությամբ նրանց վրա վազեց.
Մեկն շտապելով ծառը բարձրացավ,
Մյուսն անձարացած՝ դետնի վրա պառկեց:

Շունչն իրեն քաշեց
Ու անշարժ մնաց,
Վոր արջը կարծե,
Թե նա մեռած ե:

Արջը մոռալով՝ մոտեցավ նրան,
Ականջը կամաց գրավ բերնի վրա.
Ականջ դրեց,
Հոտ քաշեց,
Վերջապես նրան մեռած կարծելով,
Հեռացավ գնաց՝ դունչը լիզելով:
Փախած ընկերը ծառիցն իջավ ցած,
Ընկերին հարցրեց, թե արջն ինչ ասաց:
— Արջն ինձ պատվիրեց, վոր յես մյուս անգամ
Քեզ պես մարդու հետ վորսի չզնամ,
Վոր մեղ մի վտանգ—բան պատահելիս՝
Մենակ չթողնես ու ինքդ փախչես:

ՆԱԽԿԻՆ ՃԱԼԻՃՆԵՐԻ ՏԵՂԸ

— Քեռի, այ քեռի, մեր ձին չես տեսել. մեռանք վնտուելով,—հարցրին յերեխաները կոլտնտեսության պահակին, վոր նստել եր իր տնակի դռանը և թերթ եր կարգում:

— Զեր ձին մի ժամ առաջ խրվեց ճահճի մեջ. հիմի նրա ականջները կտեսնեք միայն:

Յերեխաները զիտեյին, վոր պահակը կատակասեր մարդե, հանաք ե անում, բայց նրանք չգիտեին, վոր այդ զաշտերի տեղը առաջ ճահճի ե լեղել. Նրանք լուրջ կերպով հարցրին.

— Ի՞նչ ճահճ, վորտեղ ե այդ ճահճը, վոր միայն դու յետ տեսել:

— Այս, յետ տեսել եմ. իսկ դուք չեք տեսել, ճիշտ ե: Այս պատմեմ—լսեցեք:

Առաջ, յերբ դուք չկալիք, ցարի ժամանակ, այս կողմերը

ճահիճ եր. ձին ել եր խրվում, կողք ել, տեղին անծանոթ մարդն
եր իսկ վոչխարներն ու գառները խեղդվում եյին, կորչում:

— Հաղա ի՞նչ յեղան ճահիճները, քեռի:

— Ինչ յեղան. մենք հա դիմում եյինք մեր մեծերին, իշխանավորներին, ասում եյինք՝ պետք ե չորացնել: Բայց Թվ եր
լոռզը:

«Մենք ենք ատեղծել ճահիճը, վոր մենք ել չորացնենք»,
— ասում եյին գյուղի փողատերերը:

Շատ վիճեցինք, աղմկեցինք, բայց իդուր:

Իսկ Խորհրդային իշխանությունն ալղակա չվարվեց. աեսանք պետք ե չորացնել—ել չերկարացրինք: Յերկու տարում
առուներ փորեցինք. ջրերը ցած հոսեցին, ճահիճները չորացան:
Հողը մշակեցինք ու ահա այդ հողերով կանցնեք, ձեր ձին կը-
դունեք:

— Ի՞նչ լավ ե, վոր ճահիճները չորացրել են,— ասացին
յերեխաներն ուրախ-ուրախ,— հիմա ուր ել լինի, կդանենք մեր
ձին:

Նրանք շարունակեցին իրենց ճանապարհը և դաշտից այն
կողմն, անտառում գտան կորած ձին:

ԱՆԻՎԻ ՅԵՐԳԸ

Շոգիդ ու շունչս
իրար են ձուլվում,—
Անիվ իմ, դարձիր:

Դեռ նոր կոշտացած
իմ բազուկները
Քեզ հետ են կապված,—
Անիվ իմ, դարձիր:

Կարծես թե կյանքում
Յերկուսս եսպիս
Մեկտեղ ենք ծնվել,—
Անիվ իմ, դարձիր:

Անսանձ ու անզուսալ
Սեր կա մեր սրտում,
Իրար ենք սիրում,—
Անիվ իմ, դարձիր:
Կյանքի փոթորկում
Իրար մենք գտանք
Ու շենք բաժանվի,—
Անիվ իմ, դարձիր:

Շոգիդ ու շունչս
իրար են ձուլվում,—
Անիվ իմ, դարձիր:

ՆԵՍՈՅԻ ՔԱՐԱԲԱԼՆԻՍԸ

Կիրակոսը մրոել եր, անկողին եր ընկեր տանջվում եր
տաքության մեջ: Հարևոնները հիվանդի շուրջը հավաքված,
ողեն լիքը, զրուց եյին անուած, շիրուխ քաշում:

— Տղերք, սա վոր քրտնի վոչ, բան չի դաւնալ, Յեկեք
սրան մի քարաբաղնիս անենք,— ծխի միջից առաջարկեց Նեսո
բիձեն:

— Հա, եղ խելքս կտրեց, — հավանություն տվեց մի ուրիշը:
— Դրան ել ուրիշ ճար չկա, — ձեն տվին ես ու են կողմից:

— Կիրակնս...

— Հը:

— Ասում ենք՝ քարաբաղնիս անենք — ի՞նչ ես ասում:
— Վախենում եմ... չդիմանամ...
— Տո, կդիմանաս, յերեխա նո չեմ:
— Դե... դուք գիտեք... ձեզ... մատաղ:
— Աղջի, պղինձը ջուր լցրեք: Մի փեշ ել քար բերեք,
կրակին ածեք տաքանան:

Պղինձը գրին կրակին, քարերը ածին կրակի մեջ ու նըս-
տեցին: Նեսո բիձեն սկսեց պատմեք, թե քանի յե ապատ-

վել քարարագնիսով՝ Մատղաշենց Դանելը, Մաթոսենց Մինասը,
Շատուրանց Սեփանը, Մաշկավորանց Մկոն—մինչև վոր ջուրը
լեկ յեկավ, քարերն ել կարմրեցին:

- Դե ժամանակն ա, վեր կացեք:
- Տղերք, վախում եմ... կանչեց հիվանդը:
- Դու սուս կաց: Աղջի, մի յերկու հաստ լեհեր բերեք, մի
շորս-հինգ հոգի ուժով տղերք ել յեկեք եստեղ:

Շորերով փաթաթած յեռման ջրով միքը պղինձն ու հի-
վանդին դրին իրար հետ, կարմրած քարերը լցրին ջրի մեջ.
Քարերը թշշացին, ամափ նման գոլորշին սկսեց բարձրանար,
շտապով վերմակները ծածկեցին ու չորս կողմից վրեն նստա-
տեցին:

- Վայ, խեղդվեցի,—խուլ գոռում եր հիվանդը:
- Խեղդվիլ չի... տղերք, պինդ նստեք: Գլուխն ու վոտ-
ներն ամուռ պահեք:

Հիվանդն աղաղակում եր, որհասական ջանքեր եր անում
շարժվելու, բայց հինգ-վեց աժդահա տղամարդ վրեն նստած
չելին թողնում:

- Ո՞ւր ես զնում,—կանչում եյին ես ու են կողմից, վե-
րեից սեղմում ու հոհուում:

— Հիմի թե չըրանի:
Ու Նեսո բիձեն, հիվանդի վրեն նստած շիբուխը բերանին
շարունակում եր իր պատմությունը:

Նեսո բիձու պատմությունը վերջացավ. վեր կացան, վեր-
մակները յետ քաշեցին: Գոլորշին ողեն բռնեց: Բայց կիրա-
կոսը...

- Կիրակօս,—ձեն տվին, շարժեցին, քաշքեցին: Կիրակոս
Հկա:
- Այ տղա, ես վոնց Ֆլավ,—մոլորված արտասանեց
Նեսոն:

Մյուսները լուս եյին:
— Վայ, տունս քանդվեց...—ծղրտաց կիրակոսի կինը: Ի-
րար հրելով տղերքը դուրս եկան կտուրը: Ու մինչդեռ ներքե
կիրակոսի կինը սուգ իր անում, կտերը արևում նստածած ար-

գերքը պատմում եյին, թե քանի-քանի հոգի յեն խեղդվել քա-
րտագնիսից:

— Տո, դե ճակափ դիր ե, ելի, հո նրանց ել նեսոն շե
խեղդել:

Նեսոն լուս, գուխը կտի արած, լուսմ եր ու շիբուխ
եր քաշում:


ԴԺՎԱՐ ՏԱՐԻ

Վարի, գութան ջան, վարի,
Շառ ե գժվար ես տարի:
Պապին տարան քյոխվի դռա,

Հարկ են ուզում.—Տնւր, հա տնւր...
— Կտամ, քյնիվա, փող չունեմ...
— Զունեմս, Շեկոն կտանեմ:
— Աման քյնիվա, քեզ զուրբան,
Շեկոն զնա թնդ՝ գութան,
Փարնան անենք վարուցանք,
Կալը կալսենք, բերենք տանք:
Փարունը յետ դառավ ել,
Գութան լծվեց—հորովել...
— Վարի, գութան ջան, վարի,
Դատենք ցորեն ու գարի,
Տանենք, ածենք քրոխվի փեշ,
Վոր չտանի մեր գումեշ:

ՀԱՐՑԵՐ

1. Մեր կյանքի վեր շրջանն ե ներկայացված այսուղ:
2. Վորմնք են այլ շրջանի բնորոշ գծերը:
3. Ի՞նչ վիճակումն ե ապրել գյուղացին ե թնչ հակառ ե ունե-
ցել ապագայի նկատմամբ:



ԴԱՇՏԵՐ

Դաշտեր, դաշտեր անծայրածիր,
Ծով դաշտերում վուկի հասկեր,—
Սպասում են քո գալուստին,
Ցերկաթաթե հնձֆար ախպեր:

Արի, արի խնդությամբ լի,
Մեծ փրկարար հյուրի նման...
Թող ամեն տեղ յերգդ հնչի,
Հյուր փրկարար, հյուր աննման:

ԻՆՉՊԵՍ ՏԵՐՏԵՐԸ ԳՈՒՇԱԿԵՑ ԱՆՁՐԵՎ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

— Իմ ուսերին 80 տարի յե նստած, — պատմում ե քեռի
Միխակը, — վորից 60 տարին անց եմ կացրել աստծուն յերկը բար-
պագելով և ազոթելով: Եղ 60 տարվա ընթացքում հիվանդ ենք
ունեցել՝ մատաղ եմ արել, վոր լավանա. հողը լավ բերք չի
տվել՝ աղոթել եմ աստծուն, վոր անձրե գա. գործս անհաջող
ե անցել՝ գիշեր-ցերեկ աղաջել ու պաղատել եմ աստծուն,
վոր նեղ զրությունից ինձ հանի: Մի խոսքով՝ ամեն մի նեղ

վիճակում յեղած ժամանակ աստծու ոգնությանն եմ գլուխել...

Մի տարի ել հիշում եմ, յերկար ժամանակ անձրե չեկավ,
մեր արտերը չորանում եյին: Մեր գյուղացիներն ինձ ուղար-
կեցին գյուղի տերտերի մոտ խնդրելու, վոր նա մաղթանք
անի, անձրե բերի: Արդպես ել արեցի: Տերտերը լսելով ինձ՝ ա-
սաց.

— Քեռի Միխակ, արի դու մի-յերկու որ հետո, մինչև յես
կաղոթեմ աստծուն և ճիշտը կիմանամ նրա միտքը:

Մի-յերկու որ հետո գնացի: Տերտերը յեկեղեցումն եր:
Ինձ տեսնելուն պես կարծես մի բան հիշելով նա մտավ իր
խուցը, իսկ ինձ ասաց, թե մի քիչ սպասիր: Յես հետաքրքրու-
թյունից նրա հետեւից գնացի և տեսա կիսաբաց դմնից, թե ինչ-
պես նա ուշադիր գիտում եր պատից կախված ժամացուցի
նման մի կլոր բան: Քիչ հետո տերտերը դուրս յեկավ և ա-
սաց, — զե գնանք... Աստված խոստացավ մեր մեղքերը ներել և
անձրե ուղարկել:


Գնացինք, տերտերը մաղթանք արեց: Ժողովուրդն ահա-
պին մատաղ եր մորթել, տերտերին ահազին խաչնամբուր տը-
վին... և խսկապես անձրե յեկավ:

Հետո, Խորհրդացին իշխանության որոք, յերբ յես մեր
գյուղատնտեսի մոտ տեսա բարոմետրը (ծանրաչափ), նոր խմացա
տերտերի խարեբայությունը: Տերտերի խցում պատից կախ-
ված ժամացուցի նման գործիքը բարոմետր եր, վոր ցույց է
տալիս ողի ճնշումը և նախատեսում անձրեացին լեղանակը:
Տերտերը գիտությունն՝ անգամ ոգտագործել եր մարդկանց
խարելու համար:

ՄԻՉՈՒԲԻՆԻ ԱՅԳԻՆ

Մի մեծ գյուղում, բերքի տնի ժամանակ, գյուղատնտե-
սական ցուցահանդես կար:

Ամեն տեսակ հացահատիկների, բանջարեղենների հետ
գրված եյին նաև սքանչելի, պտուղներ:



Միջուրին

Գյուղացիները հավաքված նայում եյին այդ պտուղներին։ — Զարմանում եք, հա, — ասաց գյուղատնտեսը, մոտենալով նրանց։ — դուք գեռ դա յեք տեսել։ բա Միջուրինի այգին փոր տեսնեք, ինչ կասեք։

— Միջուրինն ով ե, ընկեր Վահրամ, նրա այգին ի՞նչ տեսակ ե վոր, — հարց տվեց գյուղացիներից մեկը։

— Այ, լսեք, պատմեմ։

Գյուղացիները շրջապատեցին գյուղատնտեսին. նա շարունակեց։

— Խորհրդային մեծ գիտնական, հայտնի ալգեգործ եր Միջուրինը։ Նա տասնյակ տարիներ փորձեր եր անում, փորակեսզի նոր տեսակի բույսեր աճեցնի մեր յերկրում։ Յես յեղել եմ նրա մշակած այգիներում և ահա թե ինչեր եմ տեսել։

Անա թփերի մի մարդ. սրանք թղուկ տանձենիներ են. տանձը նույնն ե. սովորական տանձից ել խոշոր ու համեզ,

քայց ծառն այնքան փոքր ե, վոր կարող ես վրայից թռչել այսպես ավելի քիչ տեղ ե բռնում, հեշտ ե խնամեն ու պառզը հագաքելը։

Անա բալենին. նա աճում ե ծաղկամանի մեջ, սեղանի վրա. Բայց տեսեք, ինչքան բալ կա վրան. ամեն մի կոթի վրա վոչ թե զույգ բալեր են աճել, այլ հիսուն, վաթսուն հատ։

Միջուրինի այգում ամսպիսի խնձորներ կան, վորի տակ պահակները վախենում են քնել։ Ձեռքերիդ ափերի մեջ հազիվ կարող ես տեղափորել մի խնձորը։ Յեթե ծառից վայր ընկնի տակը քնած պահակի գլխին, կարծում եմ այնքան ել հաճելի չի լինի նրա համար։

Միջուրինի մորենու մեկ թուփը տալիս ե վեց, յոթ կիլոգրամ մորի. այն ել ինչ մորի. ամեն մի հատիկը չորս անգամ մեծ ե մեր մորուց. համեզ ե, դիմացկուն. ուր ուզում ես ուղարկիր — չի տրորվի, չի փշանա։

Ամենացուրտ և ամենատաք յերկրների բույսերը Միջուրինն ընտելացրեց և այժմ նրանք աճում են մեր յերկրի ամեն մի մասում։

— Մեզ մոտ ել պետք ե այդ փորձերն անենք, — վրաբերեց կոմյերիտական կեկիլ։

— Այո, այո, — ձայն տվին այս ու այն կողմից կոլանտեսականները։

ԲԱՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Հնտելացրեց — վարժեցրեց, ոռվորեցրեց։

ԳՅՈՒՂԻ ՀԵՔԻՄԸ

1

Հեքիմ համսն վաղուց եր մեր գյուղում։ Թե վորտեղից եր յեկել համոն՝ այդ վոչ չպիտեր. իսկ թե վնասեղ եր սովորել նա իր հեքիմությունը՝ այդ ևս մեծ գաղտնիք եր։

Գարնան սկիզբն եր. Ծերուկ թաթոսի բրիգադի յեզներից յերեքը հիվանդացել եյին. քոր եր, թե քո՞ ինը չգիտեր

միայն խեղճ անասուններն անդադար քոր եյին անում, քսվում մոռըներին, սյուներին, կճղակներով իրենց մաղը վեր անում ու նույնիսկ կաշին պլոկում:

Հեքիմ Համոն մի յերկու անդամ յեկել, ինչ-վոր մի բույսի արմատ եր յեփել ու ջուրը քսել յեզներին, բայց հիվանդությունը չեք անցնում, յեզներն ավելի եյին քորվում, նիհարում ու կեր ել չեյին ուտում:

Տեսնելով, վոր այդ դեղը չի ոգնում, հեքիմը վարոշեց հիվանդ անասունների վերքերը դադել:

Յեզները դուրս բերին ու թոկով դունչներն ու յեղջուրները պինդ-պինդ կապեցին սյուներից, վոր դադելիս չկարողանան շարժվել: Ու յերբ հեքիմ Համոն շիկացած շամփուրը ձեռքին այրում եր յեզների հիվանդ մորթին, ու յեղջերահոտը տարածվել եր շուրջը, հանկարծ թաթոսի բակը մի ձիւվոր մոտավ. սա տեսնելով այդ բժշկությունը՝ աղաղակեց.

— Ի՞նչ եք անում. այդ վայրենություն ե:

Հեքիմն ու թաթոսը շուռ յեկան ու տեսան շրջանային անասնաբուժին:

Դա անասնաբուժ Ավետիքյանն եր, վոր գնում եր Սարաշեն գյուղը, բայց արդեն մութին եր ու յեկել եր թաթոս ապոր տունը՝ գիշերելու:

2

— Ի՞նչ բանի յեք, — ասաց անասնաբուժը ձիւց իջնելով և մոտենալով նրանց:

— Դազում ենք, վոր քոսը բժշկվի, — հանցավորի ձայնով ասաց թաթոսը:

— Քո բժիկադի յեզներն են:

— Այո, իմն են:

— Ապա ով ե սովորեցրել ձեզ այդ բժշկությունը, — գայրացած հարցրեց բժիշկը՝ զիտելով խեղճ անասունների կաշին ու բերանների կապը:

— Այ սա, մեր հեքիմն ե սովորեցրել — ցույց տվեց թաթոսը Համոյին:

— Հա, յես դրան ցնւյց կտամ, թող սպասի:

Ապա պատվիրեց յեզներին արձակել և ջոկ գոմում կապել:

Այնուհետև անասնաբուժն իմանալով, վոր գյուղում քուսով հիվանդ ուրիշ անասուններ ել կան, վորոշեց հաջորդ որը մնալ այդ գյուղում: Կանչեց գյուղխորհորդի նախագահին, նրա միջոցով պատվիրեց, վոր հետեւյալ որն առավոտայն բոլորն ել իրենց հիվանդ անասունները տանեն գյուղից գուրս գտնվող գատարել, ընդարձակ մարագներից մեկը:

3

Հաջորդ որը մեկն իր կովը բերեց, մրուսը՝ հորթը, յերբորդը՝ ձին, ու բժիշկը մեկ-մեկ հիսուն անասուն քննելով՝ տեսավ, վոր դրանք վարակված են քսով: Պատվիրեց այդ անասունները տեղավորել մարագներում, մեծ կաթսաներով ջուր յեսացնել տվեց և պատվիրեց բոլոր անասուններին լողացնել: Ապա ծծումբով մի դեղ պատրաստեց, քսեց անասուններին և կարգուեց, վոր առանձնացրած պահեն և յերեք որից հետո նոգազը, նորից դեղ քսեն, ու նորից լողացնեն, ալսավխով 7—8 որից հետո անասունները կրժշկվեն:

Այնուհետև կրաջրի հետ սուլեմա խանեց ու պատվիրեց՝ բոլոր հիվանդ անասունների գոմերը լվանալ, մաքրել ալգ լուծվածքով:

Այս գեպքից հետո այլևս հեքիմ Համոյին վոչ վոք չեր հավատում:

Սրանով ել վերջացավ նրա «բժշկությունը»:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Հեքիմ — բժշկություն անող, վորը բժշկություն չգիտել:

2. Կեղակ — պճեղ:

3. Մատուր — այն տեղը, ուր անասունների համար կեր են լցնում:

4. Դազել — այրել:

5. Սովեմա — մկնդեղ (մի տեսակ թույն ե):

Ծիրան անունով մի յեզն ունեյինք։ Մի ձմեռ եղ յեզը կորավ։ Ախաբերս ինձ դրկեց ման գալու։ Յես 16—17 տարեկան տղա լեմ։ Գնացի գեղի չորս կողմը ման յեկա, ման, չզտա։ Գոմահանդ ունենք, ենքան ել գեղիցը հեռու չի։ Ասի՝ յեզը սովոր ե, կարելի յե եղ կողմն ե դնացել։ Գնացի եղ գոմահանդը։ Գնացի, ես գոմը նայեցի, են գոմը նայեցի, վերջը տեսնեմ, վոր յեզը մի գոմում ե։ Յեզը դուրս արի։ Դուրս գամ տեսնեմ՝ արդեն մութն ընկնելու վրա յե։ Սիրաս մի ահ ընկավ։ Տեսնում եմ, վոր լուսով չեմ կարող գեղը հասնել։ Մտածում եմ,— գնամ-չգնամ։

Ի՞նչ անեմ...

Չորս կողմս ամայի ձյունապատ դաշտ, շեն չկա, ձեն չկա. ձեռիս ել մի ճիպոտ ու մի դանակ։

Ի՞նչ պետք ե անեմ։ Յեզն առաջս արի, քշեցի։ Մի քիչ անց եյի կացել, հանկարծ իրիկվան դառը քամու հետ մի տխուր ձայն ընկավ ականջովս։ Կանգնեցի ականջ դրի...

Տեսնեմ գելի վոռնոց ե. ու, ու...

Ես վոռնոցին միացավ մի ամբողջ խումբ։ Սարսափով լցվեց դաշտը։ Մտիկ տամ՝ վոր աջ կողմս, հեռվում, մթան մեջ վառված ճրագների մի բազմություն ե շարժվում. . . Ել ի՞նչ. ձեռաց հասկացա, վոր գելերի աչքերն են՝ սոված բոլուկ ե...

Յեզը յետ տվի դեպի գոմերն ու քշում եմ, վոնց եմ քշում. վազում եմ, վոնց եմ վազում... Յետ նայեմ, վոր արդեն դալիս են. Յեզը թողի, փախա, ընկա գոմը։ Ընկա գոմը, բարձրացա... մերի գերանների միջև դատարկ տեղեր են լինում, վոր կոչվում են կոնդ։

Եղ կոնդերից մեկին վեր յելա։ Դեռ չեյի տեղավորվեր մին ել տեսնեմ յեզանս գոռոցը բարձրացավ։ Զարմանք բան ե, թե ենքան տարածությունը մի յերկու ըովեյում վոնց կտրեցին ու հասան։

Յեզանս գոռոցը բարձրացավ ու խօկույն ել կտրեց, խըռ-խըռոցն ընկավ։ Խոխոոցն ել կտրվեց, միայն գելերի ժընգժըն-գոցն եմ լսում, ու լսում եմ վոնց են լափում. . .

— Վայ, Ծիրան ջան, . . . գուրս թուավ սրտիցս։

Բայց ինչ Ծիրանի ժամանակն ե։ Յես իմ գլուխն եմ լաց ըլում։ Մտածում եմ թե՝ ես լավ եր, յեզնովը կըլեն, մինչե կլուսանա, կամ կկշտանան ու կգնան, կամ, տսում եմ, ինձ չեն գտնի. . . Դու մի ասի՛ սոված գելի բոլուկ, յես հիսուս ասեմ, զու հարլուր իմացի. ձեռաց հախոել են ու մին ել տեսնեմ՝ մութը գոմը լցվեցին են վառած ճրագները, ոելիները բաց արած. . .

Գտան. . .

Յեկել են լցվել, ներքևկից ագահ-ազահ ինձ են մտիկ անում։

Յես ել չորացել եմ, մասցել վերել՝ գերանին կպած։ Մտիկ արին, մտիկ ու թողին դուրս գնացին։

Շունչս յետ յեկավ։ Մին ել ինչ եմ լսում։

Իմ ուղղությամբ վերեկից կտուրը քանդում են, չանգերովը հողը յետ են տալիս։ Արդեն լսում եմ՝ չանգերը կոնդերին են կպչում։

Սառը քրտինքը վրա տվեց. . . Շտապեցի՝ տեղս փոխեցի, անց կացա մյուս կոնդի վրա, կուչ յեկա։

Բաց արին, կոճը վեր կալան, տեսան տակին չկամ։

Ելի յեկան ներքե։ Մտիկ արին, վոր մյուս կոնդի վրա յեմ, ելի դուրս գնացին։ Հիմա ես կոնդի վերեկից սկսեցին քան-դել կտուրը։


Դարձյաէ տեղս փոխեցի։ Եսպեսով՝ նրանք քանդելով, յես տեղս փոխելով, հասանք վերջին կոնդին։

Ել ուր գնամ։

Յեկան մտիկ արին կատաղած ու յետ գնացին։ Քանդում են, վոնց են քանդում. . .

Մի սուր դանակ ունեյի զրպանումս, հանեցի բաց արի ու ձեռիս բռնեցի։

Իսկ հենց ականջիս վերել քանդում են։ Քանդելով, հասան կոճերին։ Մինը կոճերի արանքով թաթը մեկնեց, վոր



կոճը յետ քաշի, թաթը բռնեցի ու են սուր դանակովը, զը՞թ, կտրեցի... թաթը փախցրեց, վոռնալով, կոնծկոնծալով յետ գնաց ու կտրի վրա իրարով անցան: Իմացել եյի, վոր գելերի մինը յեթե վիրավորվեց, մլուսները վրա լեն թափում, նրան ուտում: Ասի՝ ուրեմն սրան ուտում են: Հիմի սպասում եմ, վոր սրան ուտեն պրծնեն, յետ կդան: Ելի դանակս ձեռիս պատրաստ սպասում եմ:

3

Ականջս ձենի յե: Գիշերվա մի ժամին՝ վոնց վոր յերազում՝ մի բարակ ձեն եմ լսում:

— Ավո, հել...

Ինձ են կանչում...

Միթե ինձ են կանչում... Միթե ախպերս ե... Միթե մերոնք են... Գոմից ձեն եմ տալիս, գոտում եմ: — Աղանիկ, հեյ...

Եստեղ եմ... Գոմումն եմ, գելերն ինձ ուտում են... + Ողնեցեք, հել...

Ելի նրանք ձեն են տալիս, իմ ձենը չեն լսում, թեհ յես շարունակ կանչում եմ:

Մին ել տեսնեմ հրացանները տրաքեցին, յետեից լսեցի հեռացող գելերի կաղկանձն ու մարդկանց հարահրոցը: Պարզ ձանաչեցի ախպորս ու մեր գեղացի տղերանց ամեն մեկի ձենը:

— Ավո, հեյ...

— Եստեղ եմ... Եստեղ եմ... Կենդանի յեմ...

Ներս թափվեցին գումը: Ուրախացած ու զարմացած, կանչում են ամենքը: Ցած յեկա վերջին կոնդի վրից: Սխալորս գիրկն ընկա ու սկսեցի հեկեկալ:

Դուրս յեկանք գուռը, ուր թափված եյին մեր Ծիրան յեղան վոսկորները:

Դեռ լույսը չեր բացվել:

Հեռվից լսվում եր գելերի վոնոցը:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Դոմահանդ—ձմեռը կամ գարնանը անտառները պահելու տեղ:
2. Ամայի—անմարդարնակ:
3. Բոլուկ—գայլի խումբ, վոհմակ:
4. Կոնդ—գերան:
5. Հախուել—միանգամից արագ ուտել:

ԳԱՐՆԱՆ

Մայիսը յեկավ վարդավառ,
Կարմիր վարդը թփին շար,
Բուրմունքն անուշ, շունչն անուշ,
Գույն-գույն ծաղկի փունջն անուշ:

Մայիսը յեկավ զովարար,
Ի՞նչ սիրուն ե մեր աշխարհ,

Պաղ-պաղ աղբյուրն ե անուշ,
Ուրախ զեփյուռն ե անուշ:

Մայիսը յեկավ կենսուրախ,
Զիլ հնչում ե յերգ ու տաղ,
Հովվի սրինդն ե անուշ,
Հոտաղի յերգն ե անուշ:

ԲԱՌԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

- Զեփյուռ—մեղմ, գուրեկան քամի:
- Կենսուրախ—ուրախ կյանք ավող:

ՍԱՍՈՒՆՑԻ ԳԱՎԻԹԸ ԳԱՌՆԱՐԱՄ

1

Այս դարում Մորա անհաղթ ու հզոր
Մորա Մելիքն եր նստած թագավոր:
Հենց վոր իմացավ ել Մհեր չկա,
Վեր կացավ կովով Սասունի վրա:
Զենով Ոհանը ահից սարսափած՝
Թշնամու առաջը յելավ զլխաբաց,
Աղաչանք արավ, ընկավ վոտները.
— Դու յեղիր, ասավ, մեր զլխի տերը,
Ու քո շվաքում քանի վոր մենք կանք,
Քո ծառան լինենք, քո խարջը միշտ տանք,
Միայն մեր յերկիր քար ու քանդ չանես
Ու քաղցր աչքով մեզ մտիկ անես:
— Զե, ասավ Մելիք, քո ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թրի տակով,
Վոր եգուց—ելոր, ինչ ել վոր անեմ,
Վոչ մի սասունցի թուր չառնի իմ զեմ:
Ու գնաց Ոհան՝ բոլոր բովանդակ
Սասունը բերավ, քաշեց թրի տակ
Մենակ Դավիթը, ինչ արին-չարին,

Մոտ չեկավ դուշման Մելիքի թրին:
Յեկան քաշեցին՝ թե զոռով տանեն,
Թափ տվավ մարդկանց գցեց զես ու դեն:
Փոքրիկ ճկույթը մի քարի տափ,
Ապառաժ քարից կրակ դուքս թռափ:
— Պետք ե սպանեմ ես վոքրիկ ծուռին,
Սասավ թագավորը իրեն մեծերին:
— Թագավոր, ասին, դու եսքան հզոր,
Թրիդ տակին ե վողջ Սասունն այսոր,
Ի՞նչ պետք ե անի քեզ մի յերեխա,
Թեկուզ իր տեղով հենց կրակ դառնաւ:
— Դուք գիտեք, ասավ Մորա թագավոր,
Բայց թե իմ գլխին փորձանք դա մի որ,
Ես որը վկա,
Սրանից կգա:

2

Ես վոր պատահեց, մեր Դավիթ հսկան
Մի մանուկ եր գեռ յոթ-ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց ենքան ուժեղ,
Վոր նրա համար թե մարդ,—թե մժեղ:
Բայց վայ խեղճ վորքին աշխաբքի վրա,
Թեկուզ Առյուծի կորյուն լինի նա:
Զենով Ոհանին ուներ մի չար կին:
Մին-յերկու լուց, մի որ ել կարգին
Իրեն մարդու հետ սկսավ կովել.
— Յես մենակ հոգի, հազար ցավի տերը
Ի՞նչ ես ուրիշի վորքին տուն բերել
Նստեցրել գլխիս պարապ հացակեր...
Հողեմ զլուխը... յես զերի հո չեմ
Ամենքի քեֆի լիտեից թոշեմ...
Մի կուռ կորցրո՞ւ, կարդիր մի բանի,
Գնա իր համար աշխատանք անի...
Ու հետն սկսավ վողբալ ու կոծել,



Իր որը սգայ իր բախտն անիծել,
Թե անըախտ յեղավ աշխարքի միջում,
Վոչ մի տեր ունի, վոչ մարդն ե խղճում...
Գնաց Ոհանը յերեխի վոտի
Մի զույգ փոտնաման բերավ յերկաթի,
Յերկաթի մի կոռ շալակին դրած,
Ու արավ Սասմա քաղքի գառնարած:

3

Քշեց գառները մեր հովիվ հոկան,
Յելավ Սասունի սարերն աննման.
«Եւ ջնն, սարեր,
Սասմա սարեր...»
Վոր կանչեց, նրա ձենից ահավոր
Դղորդ—դմղմբոցն ընկավ սար ու ձոր,

Վայրի դաղաններ բներից փախան,
Քարեքար ընկան, դաղարկուն յեղան:
Դավիթն ընկավ նրանց յետեկից,
Վորին մի սարից, վորին մի ձորից—
Աղվես, նապաստակ, գել, յեղնիկ բռնեց,
Հավաքեց, բերավ, գառներին խառնեց,
Իրիկվան՝ քշեց գողջ Սասմա քաղաք:
Կաղկանձ ու վոռնոց, աղմուկ, աղաղակ...
Քաղքցիք հանկարծ մին ել են տեսան՝
Գալիս են հրես անհամար գաղան.

«Վայ, հարայ, փախէք...»

Մեծեր, յերեխեք
Սրտաճաք յեղած,
Գործերը թողած,
Վորը տուն ընկավ, վորը ժամ, խանութ,
Ու ամուր փակնց գուռն ու լուսամուտ:
Դավիթը յեկավ, կանգնեց մեյդանում.
— Վահ, ես մարդիկը ինչ վաղ են քնում.
Նեյ ուկատեր, հեյ գառնատեր,
Յելեք, շուտով բացեք դռներ.
Ով մինն ուներ—տասն եմ բերել,
Ով տասն ուներ—քսան արել...
Շուտով յելեք, յեկեք, տարեք,
Զեր գառն ու ուլ գոմերն արեք:
Տեսավ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն ել մեկնվեց քաղքի մեյդանում,
Գլուխը դրավ մի քարի մսաց
Ու մուշ-մուշ քնեց մինչև լուսաբաց:
Լուսին՝ իշխաններ յելան միասին,
Գնացին Զենով Ոհանին,—ասին.
— Տն Զենով Ոհան, տո՛ մահի տարած,
Ես խենթը բերիր, արիր գառնարած,
Վոչ գառն ե ջոկում, վոչ գել ու աղվես,
Դագաննով լցրեց մեր քաղաքն եսպես.

Հոգիդ կսիրես՝ զիք ուրիշ բանի,
Թե չե ես խալխին լեղաճաք կանի:

ԲԱՌԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ

1. Խարջ—հարկ:
 2. Ելոր—մյուռ որը:
 3. Դումանի—թշնամի:
 4. Կարյուն—գաղանների ձագ (առյուծի):
 5. Ծուռ—խնիթ, խելառ:
 6. Կոծել—լաց լինել:
 7. Կոռ—մահակ:
 8. Դադարկուն լինել—անտուն-անտեղ մնալ:
 9. Կաղկանձ—գաղանի ձայն:
 10. Մերզան—հրապարակ:
 11. Մեկնվել—պառկել, ձղվել:
 12. Կուռ—կողմ:
-

Ց Ա. Ն Կ

1. Ալբբենարան	3
2. Վ. Ի. Լենին	49
3. Ժամի չորսին—Լարին	51
4. Յերկար տպի մեր Ստալինը.—Ա. Մերեբրակյան	52
5. Ստալինին.—Աշուղ Գրիգոր	55
6. Յերգ Ստալինին.—Աշուղ Շերամ	56
7. Մեր ըինարարություններ	57
8. Կապիտալիստական յերկներում—փոխադրություն	58
9. Հայկական ԽՍՀ	59
10. Պատրաստ են պատավանության	60
11. Անհաղթ բանակը—Հ. Հայրապետյան	63
12. Զապայիկ	65
13. Մի դեպք կամցի վրա.—«Հոկտեմբեր»-ից	66
14. Խիզախ բազեն—Բ. Միրաքյան	67
15. Վալյան, Պալինան և Մարինան.—փոխադրություն	68
16. Պատմում ե «Ռոդինա» ոգանակի օտարման Մարինան.—փոխադրություն	69
17. Լեյտենանտ Լեվչենկոն.—փոխադրութ	71
18. Առում եմ մեզ.—Ա. Ա. Պուշկին	71
19. Մեկ ել, մեկ ել.—Հ. Հակոբյան	72
20. Ծեր բանվորը.—փոխադրություն	73
21. Մարդը ձի.—Ա. Խնկոյան	73
22. Յերկու մեթենա.—փոխադրություն	74
23. Դիմումի ձև	75
24. Գուրանի յերգը.—Հ. Թումանյան	75
25. Յերկու խոփի.—Լ. Տոլստոյ	76
26. Դժվար հանելուկ	76
27. Ճախարակ.—Ղ. Աղայան	77
28. Փախաւս.—փոխադրություն	78
29. Ճանենք.—փոխադրություն	79
30. Լինա Ոդենա.—ըստ «Պիռներ կանչ»-ի	79

31. Ճպուռն ու մրջութը — Ա. Խնկոյան	81
32. Յերե տա սովորեմ, ավելի լավ կաշխատեմ	82
33. Ճննդուկ. — Ա. Տուրգենև	82
34. Յերկու ընկեր — Աղայան	83
35. Նախկին նահինների տեղը. — Գոփսադըռություն	84
36. Անիվի յերգը. — Վ. Գրիգորյան	85
37. Նեսոյի բարարադնիսը. — Հ. Թումանյան	86
38. Դժվար տարի. — Հ. Թումանյան	88
39. Դաւեմեր. — Վ. Գրիգորյան	89
40. Ինչպես տեսերը զուտակեց անձրև գալու մասին. — Կոխառություն	89
41. Միջուրինի այզին. — հայոց լեզվի 2-րդ դաս. 39 թ. դասագրքից	90
42. Գուղի հետիմբ. — Սիմակ	92
43. Գելը. — Հ. Թումանյան	95
44. Դարենանը. — Հ. Հայրապետյան	98
45. Սասանցի Դավիթը զառնարած. — Հ. Թումանյան	99
46. Հատկող այբուբեն	104

Պատ. ի ճբաղիք՝ Սիմակ
Տեղ. խմբագիք՝ ի. արդանյան
Սըրապիչ՝ Բ. Ղ. և կասյան
Կոնսըրու սըրապիչ՝ Ս Շահբաղյան

Գյալիթոի լիազոր՝ Վ. — 2224 Հըատ. № 4921

Պատ/Ել 521 Տիրաժ 30000

Թուղթ 62×92 Տպագր. 6 $\frac{3}{4}$ մմ.

Հանձնված եւ տպագրության 21 մայիսի 1939 թ.

Ստորագրված եւ տպագրության 20 հունիսի 1939 թ.

Գետհատի I տպարան, Յերեվան, Լենինի 65

3



ԳԻՆԸ 90 ԿՈՊ.
ԿԱԶՄԸ 50 ԿՈՊ.

552
11

29050